

ՄՈԳԵՐՈՒՆ ԳԱԼՈՒՍԸ

ԵՒ

ԵՐԿՐՈՊԱԳՈՒԹԻՒՆԸ

«Եւ ի ծնանեն Յիսուսի ի Բերդենէմ Հրեասանի յաւուր Հերովդի արքայի, անա մոզք յարեւելից եկին յեռասպեճ։ Եւ ասե՞ ո՞ւր է որ ծնա արքայն Հրեջ։ զի տեսք զատղն նարա յաւելու, և եկամ երկրապանել նմա»։

(ՄԱՏԲ. Բ. 1-2)

Ա. Մննդեան տօնին առթիւ, քնննենք յաւելատենական Մանկացեալ մանուկին ուխտի եկող մոգերուն չարժառիթն ու երկրպագութիւնը, խորասուզ ու եկու համար անոր խորհուրդին մէջ։

Ա. Մատթէոս աւետարանիչ կը պատմէ լուսաւոր աստղին երեւումը, մոգերուն զալուստը և երկրպագութիւնը, և Բեթղեհէմի մանկանց կոտորածը։

Մատթէոս առաքեալի համաձայն, Յիսուս ծնաւ սյաւուրս Հերովդի արքային։ Աւետարանին այս բացատրութիւնը կամ ժամանակագրութեան պարագան ինքնին շատ անորոշ արտայայտութիւն մըն է. զանգի Մեծն Հերովդէս, Յիսուսի ծնննդէն 40 տարի առաջ արդէն թագաւոր էր Հրէաստանի վրայ։ Մեծն Հերովդէս, Հռովմէն նշանակուած մանկաւիկ արքան, հրեայ ըլլալով հանդերձ, Հռովմի ենթակայ մնաց քաղաքականապէս և Յիսուսի ծնունդէն տարի մը վիրջը մեռաւ, անփառունակ, կասկածամիտ եւ երկուս թագաւորի մը համբաւը ձգելով իր ետին։

«Յարեւելից», արեւելքէն եկան կ'ըսէ Ա. Մատթէոսի աւետարանը, մոգերու զալուստեան առթիւ։ Թէս անոնց թիւը աւետարանին մէջ յիշատակուած չենք գտներ, սակայն և այնպէս, աւանդութեան համաձայն, մոգերը երեք էին։ Արեւելքը, խորհրդագաւոր և միսթիք այս երկիրը, ծնունդ տուած է մեծամիծ և հզօրագոյն թագաւորութեանց և օրբանը եղած է հնամենի քաղաքակրթութեանց։

Մոգերը թագաւորներ չեին, բայց, Մաստանի, Պարսկաստանի և Հնդկաստանի էջ, թագաւորապատիւ էին, հեղինակաւոր և պատկառազդու մարդեր՝ որոնք թագաւորներու առաջնորդ կը հանդիսանային։

Եթէ թագաւորները ժողովուրդներու վրայ կ'իշխէին, մոգերը իրենց հեղինակութեամբը անոնց վրայ ոչ միայն ազգեցութիւն այլ հմայք և պատկառանք կ'աղքէին։

Մոգերը տեղեակ էին ինչ ինչ գիտութեանց։ Անոնք՝ ոչ միայն գիտութեան և ուսման մարդիկ էին, այլ ունէին իրենց կրօնական զիտելիքները և գաղտնագիտական ուսումները։

Անոնք՝ օր մը, երկնակամարին վրայ, նորանշան աստղ մը տեսան, այս նոր և զարմանալի աստղին լոյսը Արուսեակի լոյսին չէր նմաներ, ոչ ալ Հրատ մոլորակին բոսրափայլ և ատրաշէկ բոցը ունէր։ Մոգերուն տեսած այս նորանշան աստղը զարմանալի էր արգարն, ան չունէր բոլցի և եօթնեղբայրի և առաւօտեան հովիւր աստղին պայց առութիւնը և սակայն զարմանալի և զարմանահրաշ երեսոյթներ կը տեսնէին անոր վրայ։

Երեք մոգերը նոր լոյս, նոր ոյժ և եռանդ ստացած ճամբայ ելան արեւելքի խորերէն դէպի Հրէաստան, գտնելու համար նոր թագաւորը։ Նոր Մեսիան և նոր Իշխանը, որու մասին մարգարէները զուշակած էին։ Անոնց մտքին առջև բացուեցաւ Ա. Գրքին խորհուրդը օծագեսցէ աստղն Յակոբայ և յարիցէ այր յիսրայէլէ», և անոնք իրենց ներաշխարհէն խորհրդաւոր ձայն մը լսեցին որ կ'ըսէր իրենց «Հրէից թագաւորը, մարգարէներուն գուշակած Մեսիան ծնաւ, և այդ աստղը, զոր զուք կը տեսնէք երկնակամարին վրայ, փայլուն և հրաշագան երեսոյթով Անոր աստղն է, Անոր զացէք ու ձեր ընծաները տուեք»։

Մոգերը ուրախ էին, քանի որ Մեսիան աշխարհ եկած էր և իրենք պիտի գտնէին զԱյն լուսաւոր աստղին առաջնորդութեամբ։ Բազում պատմուած քներ և ժողովրդային աւանդավէպեր հիւսուած են երեք մոգերու շուրջ։ Է. գարուն ապրօք անզլիացի վերապատռելի Պէտին համաձայն, երեք մոգերուն անուններն էին Մելքոն, Գաւոպար և Պաղտասար։ Մելքոն ծերունի մըն էր ճերմակամօրուս, Գաւոպար երիտասարդ կարմրագոյն մորթով չիկամօրուս, իսկ Պաղտասար թխագոյն անձ մը ինչ ուուր Գրքին զիտենք անոնց մասին այս է միայն, և անոնք արեւելքէն եկած մոգեր էին»։

Պատմութենէն զիտենք թէ : այդ ժամանակ ընդհանուր ակնկալութիւն մը կար, գալիք աղատաբարի մը, փրկչի մը մասին, որ մարդկութիւնը իր ենթարկուած թշուառութինէն և տառապանքին պիտի փրկէր : Հրեանիերը Մեսիայի մը կը սպասէին որ Դաւիթի անկեալ թագաւորութիւնը պիտի վերականգնէր Ա. Երուսալէմի մէջ :

Մոգերը զիտուն մարդիկ և աստղագուշակներ էին, անոնք աստղերուն շարժումները քննելով գուշակութիւններ կ'ընէին մարգոց ապագայի մասին :

Քէրէր զերժանացի աստղագէտին համաձայն, Հոռվիր 748—749 թուականներուն (իմա՞ Յիսուսի ծննդեան ժամանակ), Լուսնիթակ, Երեւակ և Հրատ մալորակները իրարու հանգիպեցան Չուլ համաստեղութեան տակ, երկնային լուսաւոր մեծ երեւոյթ մը, աստղ մը յառաջ բերելով, ինչ որ լուսաւոր աստղին երեւումը կրնանք նկատել : Երբ մոգերը Ա. Քաղաք հասան, անձկութեամբ ըսին «ո՞ւր է որ ծնաւ արքայն Հրէից, զի տեսաք զաստղն նորա յարեւլու, և եկաք երկրպագանել նմա» :

Հերովդէս արքան երբ լսեց մոգերուն գալստեան գրգապատճառը, խռովեցաւ և զանոնք կանչեց և անոնցմէ ստուգեց աստղին երեւման պատմութիւնը : Նենդամիտայս արքան, որ 40 տարիներ թագաւորեց Հրէաստանի վրայ, երբ լսեց թէ Մեսիան Բեթղեհէմ քաղաքին մէջ պիտի ծնի, ասիկա չարագուշակ նշան մը նկատեց իրեն համար, վասնզի Անոնք վերջ մը պիտի գտնէր իր անփառունակ թագաւորութիւնը : Մոգերը անպատում ուրախութեամբ Բեթղեհէմ զացին լուսաւոր աստղին առաջնորդութեամբ եւ իրենց նուէրները, սոկի, կնզրուկ և զմուռս մատուցին Անոր : Մոգերը խռնարհեցան Անոր առջն : Անառունները որ բնութիւնը կը ներկայացնէին առաջին երկրպագուները եղան Անոր, հոգիւնները որ ժողովրդին ներկայացուցիչներն էին, երկրորդ երկրպագուները եղան, մոգերը երրորդ իշխանութիւնը — Դիտութիւնը — կը ծնրազրէր Բեթղեհէմի Ա. Այրին մէջ ծնող Մասուկ-Արքային, Ասոււծոյ Միածին Արգւայն, որուն թագաւորութիւնը և իշխանութիւնը վերջ և սահման պիտի չունենար . . . Տիեզերքին Տէրը լոյս էր և իր Որդին որ լոյսը կը մարմացնէր

աշխարհն էր զրկեր, լուսաւորիլու և բարձրացնելու մարդկութիւնը : Ատեղծազործութեան մէջ, Ասոււծոյ առաջին հրաշքն է լոյսը, այն լոյսը ուրկէ կը ճառապայմէ աստուածային իմաստութիւնը : Մարդիկ, միշտ զինուած են լոյսը, այն լոյսը որ երկինքը երկրին կը միացնէ և միշտ խորհրդանշանը եղած է կրօններու, իմաստութեան և հայեցողական զիտութեանց, Արարչազործութեան մէջ լոյսով կը զոյանան և կը կազմուին բոլոր ստեղծագործութիւնները :

Իշխան մոգերուն երկրպագութենէն ի վեր, մօտ քան զարեր անցած են, սակայն Անոր թագաւորութիւնը օրէ օր կ'անձի և կը զօրանայ: Մոգերուն հետ մենք ալ երկրպագենք և փառաւորենք փառաց Տէրը, որ ծնաւ Բեթղեհէմի մէջ ի լրումն ժամանակաց: Մենք ևս, անոյշ խունկեր ծխենք Անոր սուրբ սեղանին առջն, վասնզի Ան է մեր հոգիններու Փրկիչը և մարդոց վերջին ազատարար և յաւիտենական Քահանայազետը: Մրտեսանդ աղօթք մատուցանենք Մանկացեալ Փրկչին, խաղաղութեան եւ սիրոյ Մեծ իշխանին, որպէսզի խաղաղութեան մէջ պահէ բովանդակ աշխարհի ժողովուրդները և ազգերը, անոնց մէջ ցուլացնելով իմաստութեան, արդարութեան, աղատութեան, հաւասարութեան և եղբայրակիրութեան աստուածային շողերը . . . Օրհնենք իր Ա. Ծնունդը և ցնծագինս երգենք «Ծնաւ նոր արքայի Բեթղեհէմ քաղաքի, որդիք մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմացաւ»:

ՊԱՐԳԵՒ ՎՐԴ. ՎՐԹԱՆԿԱՆԵՐ

